ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՅԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՎՐԱ

Հետազոտական զեկույց



2019թ.

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՅԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՎՐԱ

հետազոտական զեկույց

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության և Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Սպիտակի Հելսինկյան խումբ» իրավապաշտպան հասարակակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միությանն Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանի տեսակետները:

զեկույցը կազմեց՝ *Աշխեն Բաբայան*

զեկույցը սղագրեց՝ *Արևիկ Պետրոսյան*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……....5

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ.....8

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ……....9

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ……11

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ……...22

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ……24

ՆԱԽԱՁԵՌՆՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Սույն զեկույցի տպագրության նախաձեռնող խումբը իր շնորհակալությունն է հայտնում բոլոր նրանց, ում անմիջական օգնությամբ և մասնակցությամբ հնարավոր դարձավ նշված աշխատանքների իրականացումը և արդյունքների տպագրությունը:

Սույն զեկույցը պատրաստվել է Եվրոպական միության և Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանի ֆինանսական աջակցությամբ: Հրապարակման բովանդակության պատասխանատվությունը կրում է «Սպիտակի Հելսինկյան խումբ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը և այն չի արտացոլում Եվրոպական միության և Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանի տեսակետները:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Սպիտակի Հելսինկյան խումբ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը 2015թվականից զբաղվում է ընտանեկան բռնության ենթարկված կանանց իրավունքների պաշտպանությամբ: Խնդրին խորությամբ ծանոթանալու նպատակով 2017թվականին իրականացրել ենք «Լոռու մարզի կանանց հիմնախնդիրների» բացահայտմանհետազոտություն, որի արդյունքերը[1]վկայում են, որընտանեկան բռնության դեպքերը մեծ թիվ են կազմում:Այդ մասին են վկայում նաև կանանց իրավունքներով զբաղվող մի շարք հասարակական կազմակերպություններ՝ Կանանց աջակցման կենտրոն, Կանանց ռեսուրսային կենտրոն, Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա, որոնք ևս իրենց մի շարք հետազոտություններում հավաստում են, որ ՀՀ-ում լայն տարածում ունի ընտանեկան բռնությունը: Ընտանեկան բռնության հետևանքով ՀՀ-ում վերջին 4 տարվա ընթացքում տասնյակ կանայք են մահացել և մեծ թվով կանայք՝ լուրջ վնասվածքներ ստացել[2]:

Ընտանեկան բնությունը մեծ ազդեցություն ունի կանանց և հատկապես երեխաների հոգեվիճակի վրա: Երեխաները անուղղակիորեն ամենամեծ հոգեբանական տրավման են ենթարկվում: Ծնողների ամուսնալուծությունը, այլ համայնք, այլ բնակարան տեղափոխվելը, ծնողների անսպառ քաշքշուկները և բռնության տարբեր տեսարանների ականատես լինելը, նպաստում են երեխաների մեկուսացմանը և ներփակվածությանը: Դառնում են հասարակությունից կտրված, սեփական մտքերի ու մտորումների մեջ մոլորված[3]: Այս ամենը ազդում է նրանց կրթության, նրանց հոգեվիճակի վրա:

Շատ հաճախ կանայք չեն բարձրաձայնում բռնության մասին մի շարք պատճառներով, այդ թվում՝ ամոթի, կարծրատիպային մտածելակերպի, շրջապատի հալածանքների, հասարակության կողմից անտեսված լինելու և այլն: Այս խնդիրենրին զուգահեռ,հարատև ընտանեկան բռնություն ապրող ընտանիքներում երեխաները մնում են անտեսված[4]: Հասարակության զարգացմանը զուգընթաց ականատես ենք լինում տարբեր իրավիճակների, երբ ընտանեկան բռնություն վերապրող ընտանիքում երեխան ենթարկվում է հոգեբանական ճնշումների, երեխայի մոտ առաջ են գալիս հոգեբանական բարդույթներ, ինչու չէ վերջինս ևս կիրառում է բռնություն իրենից թույլերի նկատմամբ, դառնում են ագրեսիվ[5]:

Այս ամենին զուգահեռ դպրոցական հաստատություններում մանկավարժները զգայուն չեն ընտանեկան բռնության նկատմամբ, գտնում են, որ ընտանեկան անախորժ, բռնություն պարունակող հարաբերությունները նեղ անձնական են և երեխաների դրսևորած ոչ պատշաճ վարքագիծը կապում են որոշակի այլ խնդիրների հետ, բայց ոչ երբեք ընտանիքում առկա բռնության պատճառի հետ:Այս եզրակացությանըկազմակերպությունը հանգել է իր շահառուների հետ հարցազրույցներից, երեխաներին հոգեբանական աջակցություն տրամադրելու ընթացքում:

---

[1]«Լոռու մարզի կանանց հիմնախնդիրների բացահայտման հետազոտական զեկույց»https://spitakhelsinki.org/wp-content/uploads/2018/11/unnamed-file-3.pdf)

[2] «Կնասպանությունը Հայաստանում» զեկույց http://coalitionagainstviolence.org/wp-content/uploads/2019/04/femicide2018.pdf?x24321
http://coalitionagainstviolence.org/wp-content/uploads/2016/05/Femicide_Report_ARM.pdf?x24321

[3]Երեխաների պաշտպանությունը բռնություններից **https://www.unicef.org/armenia/media/4026**

[4] «ՏՐԱՎՄԱՈՒղեցույցերեխաներինծնողներիհամար» https://www.womensupportcenter.org/pdfresizer.com-pdf-resize.pdf

[5] «ՏՐԱՎՄԱՈՒղեցույցերեխաներինծնողներիհամար» https://www.womensupportcenter.org/pdfresizer.com-pdf-resize.pdf

2017թվականին Հայաստանում ընդունվեց «Ընտանեկան բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքը, որը միտված է կանխարգելելու, պաշտպանելու ընտանեկան բռնության ենթարկված անձանց իրավունքները, սակայն այստեղ ևս երեխաները երկրորդ պլան են մղվում:

Վերը նշված մտահոգությունների պատճառով կազմակերպությունն իր առջև նպատակ դրեց իրականացնել հետազոտություն, որը *հնարավորություն կտա պարզելու, թե որքանով են կրթական հաստատությունների ուսուցիչները տեղյակ ընտանեկան բռնության և դրա հետևանքների մասին, որքան են զգայուն ընտանեկան բռնություն ապրող երեխաների նկատմամբ, թե ինչպես է ազդում բռնությունը երեխայի կրթության որակի վրա:*

Հետազոտության նպատակն է ***բացահայտել կրթական հաստատություններում աշխատող մասնագետների գիտելիքները ընտանեկան բռնության մասին :***

Հետազոտությունը հնարավորություն տվեց վեր հանել ուսուցիչների զգայունությունը ընտանեկան բռնության դեպքերի,ընտանեկան բռնության վերաբերյալ նրանց իրազեկվածությանև դրան համապատասխան իրենց կողմից կիրառվող մեխանիզմների մասին: Հետազոտության ընթացքում բացահայտված արդյունքները հնարավորություն տվեցին հասկանալ, թե մանկավարժները ինչի կարիք ունեն, ընտանեկան բռնության պարագայում, երեխաների հետ ճիշտ և արդյունավետ աշխատելու համար:

Սույն հետազոտությունը իրականացվել է 2019 թվականի հունվար-օգոստոս ամիսների ընթացքում: Հետազոտությունն իրականացվել է հատուկ մեթոդաբանությամբ, որը մշակվել է փորձագիտական խմբի հետ: Հիմնական գործիքներն են եղել հարցաթերթը, ֆոկուս խմբային քննարկումը և բաց հարցազրույցները՝ տնօրենների հետ:Հետազոտության մեջ ներգրավված են եղել Սպիտակ քաղաքի բոլոր 7 դպրոցները: Տնօրենների հետ իրականացրել ենք հարցազրույցներ, յուրաքանչյուր դպրոցի 5 ուսուցիչներ լրացրել են հարցաթերթեր, իրականացրել ենք նաև 1 ֆոկուս խմբային քննարկում յուրաքանչյուր դպրոցից մեկական ուսուցչի մասնակցությամբ:

Հետազոտության արդյունքում բացահայտեցինք, որ ուսուցիչները զգայուն չեն ընտանեկան բռնության դեպքերի նկատմամբ, չեն տիրապետում ընտանեկան բռնություն ապրող ընտանիքի, երեխայի հետ աշխատելու մեխանիզմներին, որն իր հերթին բացասական ազդեցություն է ունենում երեխայի հոգեկան վիճակի վրա, ինչն էլ իր հերթին ազդում է կրթության որակի վրա:

Նմանատիպ հետազոտություն ՀՀ-ում իրականացվում է առաջին անգամ, ուստի անհրաժեշտություն կա շարունակականության՝ ինչպես հետազոտություն իրականացրած դպրոցներում իրազեկման դասընթացներ, վերապատրաստումներ անցկացնելով, այնպես էլ այլ համայնքներում հետազոտություն իրականացնելով: Հատկապես մեծ ուշադրություն պետք է դարձնել գյուղական համայնքներին, որոնք ավելի փակ ու մեկուսացված են և քիչ է բարձրաձայնվում ընտանեկան բռնության մասին: Ավելի մեծամաշտաբ հետազոտությունը կօգնի հստակ պատկերացնելու իրավիճակը ՀՀ-ում, տարածվածությունը և ավելի մեծ ուշադրություն կգրավի հանրության, պետական և ոչ պետական կառույցների կողմից: Նաև կմշակվեն խնդրի լուծման ուղղված ռազմավարություն, ինչը կնպաստի երեխաների տրավմայիհաղթահարելուն, կբարձրանա նրանց կրթական որակը և ուսուցիչները ավելի զգայուն ու ուշադիր կլինեն խնդրի նկատմամբ: Կձևավորվեն արձագանքման մեխամիզմեր և կապ՝ մանկավարժ-ոստիկան,

առկա դեպքերին արագ արձագանքելու համար։ Սույն զեկույցը կարող է հիմնաքար հանդիսնալ նաև այլ համայնքերում նմանատիպ հետազոտություն իրականացնողների համար։

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Սույնհետազոտության մեջ օգտագործվում են հետևյալ սահմանումները և հասկացությունները, որոնք սահմանված են ՀՀ օրենքներով և որոնց հետ համաձայն է հետազոտական զեկույցի մասնագիտական թիմը:

Ընտանիքում բռնություն Է համարվում օրենքով սահմանված ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բնույթի բռնի արարքը, ինչպես նաև անտեսումը, որը կատարվել է ընտանիքի անդամների միջև:

Կրթություն՝ անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու ու սերունդներին փոխանցելու համար.

Կրթության որակ՝ կրթական քաղաքականությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրագործմանը միտված կրթության կազմակերպման չափելի արդյունք, որը գնահատվում է՝հաշվի առնելով սովորողի անհատական կարիքները, կրթության կազմակերպման միջավայրը, ուսուցման ծրագրային բովանդակությունը, կրթության կազմակերպման գործընթացը և ուսումնառության գնահատված արդյունքները՝ համաձայն սահմանված չափանիշների.

Ուսումնական հաստատություն՝ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն կամ դրա ստորաբաժանում, որն իրականացնում է մեկ կամ մի քանի կրթական ծրագիր և ապահովում է սովորողների ուսուցումն ու դաստիարակությունն այդ ծրագրերի պահանջներին համապատասխան:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

«Ընտանեկան բռնությունը երեխայի կրթության որակի վրա» հետազոտության նպատակն է պարզել կրթական հաստատություններում աշխատող մասնագետների իրազեկման մակարդակը ընտանեկան բռնության մասին, պարզել արդյոք ուսուցիչները զգայուն են երեխաների վարքի փոփոխման դեպքերի, դրանց առաջացման պատճառների նկատմամբ և արդյոք ուսուցիչները ձեռնարկում են համապատասխան քայլեր երեխային աջակցություն ցուցաբերելու համար:

Հետազոտության համար կիրառվել է ***քանակական*** և ***որակական*** մեթոդներ: Քանակական մեթոդով ցանկացել ենք ընդհանրական պատկերացում կազմել երեխաների հետ աշխատող մասնագետների տեղեկացվածությունը ընտանեկան բռնության մասին, արդյոք առնչվել են ընտանեկան բռնության դեպքերի հետ և ինչ քայլեր են ձեռնարկել: Որակական մեթոդի համար իրականացրել ենք հարցազրույցներ դպրոցի տնօրենների հետ և ֆոկուս խմբային քննարկում կրթական հաստատությունների մասնագետների մասնակցությամբ:

Ընդգրկել ենք Սպիտակ քաղաքի բոլոր դպրոցները ընդհանուր առմամբ հինգ հիմնական , մեկ միջնակարգ և մեկ ավագ դպրոց:

Հետազոտությունը ավելի ստույգ արդյունք կունենար իհարկե, եթե կիրառվեին այլ մեթոդներ ևս: Ավելի ամբողջական արդյունք կունենայինք նաև, եթե ներգրավեինք երեխաներին և նրանց ծնողների հետազոտության մեջ: Օրինակ խորքային հարցազրույցների իրականացումը երեխաների և նրանց ծնողների հետ, ֆոկուս խմբային քննարկումները ծնողների և երեխաների մասնակցությամբ ևս մեծ արդյունքներ կտային: Սակայն մենք չէինք կարող ներգրավել նրանց այս հետազոտության մեջ, քանի որ դրա համար հարկավոր է հատուկ վերապատրաստում ունենալ և թույլտվություն ԿԳՄՍ նախարարությունից և այլ պատկան մարմիներից, քանի որ սա շատ զգայուն ու խոցելի թեմա է:Կարող էինք իրականացնել նաև դիտարկում, դպրոցում դասապրոցեսի ընթացքում, նախապես տեղեկատվություն ունենալով երեխայի ընտանեկան բռնության ենթարկված լինելու փաստի վերաբերյալ,բայց այս մեթոդը չէինք կարող կիրառել, քանի որ դա կարող էր դիտվել, որպես երեխաների իրավունքների խախտում, ինչպես նաև այն չի համապատասխանում հետազոտության նպատակներին: Մենք բացառել ենք երեխաների

մասնակցությունը այս հետազոտության մեջ, քանի որ կարծում ենք, որ հստակ հետազոտական արդյունք կունենանք այս փուլում ուսուցիչների հետ աշխատելիս:

Քանակական մեթոդ

Քանակական մեթոդի համար իրականացրել ենք հարցումներ Սպիտակ քաղաքի հինգ հիմնական, մեկ միջնակարգ և մեկ ավագ դպրոցի հոգեբանների, ուսուցչի օգնականների, դասվարների, դասղեկների և առարկայական ուսուցիչների հետ, ընդհանուր առմամբ լրացվել են քառասունհինգ հարցաթերթ: Հարցաթերթը բաղկացած էր հիմնականում երեք ենթաբաժիններից, որոնք ներառում էին ենթավերնագրին համապատասխան հարցերի շարք: Հիմնական բաժիներն էին. անձնական տվյալներ, հիմնախնդրին վերաբերվող հարցեր և հետադարձ կապ(Հավելված 1):

Որակական մեթոդ

Մյուս մեթոդը, որը կիառել ենք անհատական բաց հարցազրույցներ էին դպրոցների տնօրենների հետ: Մեթոդի կիրառման նպատակն է ազատ զրույցի միջոցով հասկանալ տնօրենների ներգավումը նիրազեկվածությունը ԸԲ օրենքի, դրա կիրառման մասին, ինչպես նաև ԸԲ դեպքերի բացահայտումը:

Իրականացրել ենք նաև մեկ ֆոկուս խմբային քննարկում, որի մեջ ներգրավված էին յուրաքանչյուր դպրոցից մեկ մասնագետ, որը ներգրավված չի եղել հարցաթերթի լրացման գործընթացին:

Նախնական նախատեսված էր իրականացնել երկու ֆոկուս խմբային քննարկում, բայց խորհրդակցելով ծրագրի մասնագիտական թիմի հետ նպատակահարմար գտանք մեկ ֆոկուս խմբային քննարկման իրականացումը, քանի որ դպրոցների թիվը և դպրոցում աշխատող մասնագետների թիվը մեծ չէր և մեկ ֆոկուս խմբային քննարկումը բավական էր մեր առջև դրված նպատակին հասնելու համար, այսինքն՝ դա բավական էր ունենալու համար մեր ցանկալի արդյունքը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Քանական հետազոտությանը մասնակցել են մանկավարժները, ըստ հետևյալ բաշխվածության և թվաքանակի (*տե՛ս գծապատկեր 1*), որոնց **97.6 %** իգական սեռի ներկայացուցիչներ են: Ընտրանքի նման սեռային բաշխման պատճառներից մեկը այսօր դպրոցներում կին մանկավարժների թվաքանակի գերակայությունն է: Հարկ է նաև նշել Սպիտակի դպրոցներում սոցիալական մանկավարժների բացակայության խնդիրը, որն էլ պատճառ է դարձել միայն երկու սոցիալական մանկավարժների ընդգրկմանը:

Գծապատկեր 1



Հարցվողների տարիքային կազմը (*տե՛ս գծապատկեր 2*):

Գծապատկեր 2



Գծապատկեր 3



Հարցվողների **95.2%** նշել է, որ տեղյակ է, որ գոյություն ունեն ընտանեկան բռության դեպքեր և տեղեկացված է բռության տեսակների մասին (*տե՛ս գծապատկեր 3*):Աղյուսակ 1

Ընտանեկան բռության տեսակները ըստ հարցվողների		
ծեծ	10	13,5%
երեխայինաշխատեցնել	1	1,4%
արգելք	1	1,4%
տրաֆիքինգ	1	1,4%
հոգեբանականճնշում	21	28,4%
սեռականբռնություն	9	12,2%
ֆիզիկականբռնություն	22	29,7%
տնտեսականբռնություն	4	5,4%
կամքիվրաբռնանալ	1	1,4%
ճնշում	2	2,7%
վիրավորանք	1	1,4%
իրավունքներիոտնահարում	1	1,4%

Ինչպես վկայում են հետազոտության արդյունքները,չնայած, որնշում են, որ տեղեկացված են, թե որոնք են ընտանեկան բռնության տեսակները, իրականում *մանկավարժների անգամ 30% տեղեկացված չէ տե՛սաղյուսակ 1*): Նույն երևույթը արտացոլում էնաև ընտանեկան բռնության իրավական կարգավորումների վերաբերյալ մանկավարժների տեղեկացվածությունը: Հարցվողների **73%** նշում է, որ տեղյակ է, սակայն բաց հարցերի միջոցով ակնհայտ է դառնում, որ այդ **73%** հարցվածների մեծ մասը չունի տեղեկացվածություն: (*տե՛ս գծապատկեր 4):*

Գծապատկեր 4

Այն հարցին, թե ընտանեկան բռնության ի՞նչ իրավական կարգավորումներ կան, հարցվողների **64%** նշել է ոստիկանություն դիմելը, **32%-ը՝** մարդու իրավունքների պաշտպանի և անգամ հնչել է այնպիսի պատասխան, ինչպիսին է զրկել ծնողներին ծնողական իրավունքից և երեխային հանձնել խնամքի կենտրոն: ***Այստեղ մենք տեսնում ենք հարցվող մանկավարժների կողմից ցածր իրազեկվածության մակարդակ՝ իրավական կարգավորումների վերաբերյալ, այն պարագայում, երբ հարցվողների մեջ ընդգրկված էին և՛ հոգեբաններ, և՛ սոցիալական մանկավարժներ:***

Ի տարբերություն ուսուցիչների դպրոցի տնօրենները բավական տեղեկացված են ընտանեկան բռնության դեպքերի, դրանց դրսևորումների մասին և փորձում են ամեն կերպ լուծում տալ առաջացած խնդիրներին: Ի տարբերություն ուսուցիչների, ովքեր դասից դուրս իրենց չեն վերապահում «խառնվել» աշակերտի ընտանեկան գործերին, քանի որ հասարակությունում ԸԲ-ին

արձագանքելը՝ սկսած ինֆորմացիայի տրամադրումից, ընդհուպ մինչև իրավապահ մարմիններին դիմելով, որակվում է, որպես ընտանիքի ներքին գործերին «խառնվել» :

Դպրոցի տնօրենները անհրաժեշտության դեպքում ձեռնարկում են օրենքով սահմանված համապատասխան քայլեր: Այստեղ կարևոր է նշել այն հանգամանքը, որ դպրոցի տնօրենները հիմնականում զբաղվում են երեխային դպրոց ինտեգրելով, որոշ չափով բարելավելով նրա առաջադիմությունը, սակայն բուն խնդրի հետ կապված աշխատանքը իրականացվում է մակերեսորեն, որը, բնականաբար, խնդիրը չի լուծում:

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե ովքեր պետք է լինեն ընտանեկան բռնության հիմնական դերակատարները ըստ հարցվողների*(տե՛ս գծապատկեր 5):* Պատասխանները վկայում են, որ Սպիտակում դեռևս գործում է համայնքային կարծրատիպը, համաձայն որի սոցիալական միջավայրի ազդեցությունը պետք է շատ ավելի մեծ լինի, քան համապատասխան մարմինների, որոնց հիմնական գործառույթներից է տվյալ խնդրի կարգավորումը:

Գծապատկեր 5



Ֆոկուս խմբային քննարկումներից պարզ դարձավ, որ մանկավարժները չեն մտածում ընդհանրապես «խառնվել ուրիշի ընտանեկան գործերին» և կարծում են, որ իրենք դրա իրավունքը չունեն: Շատ քիչ ուսուցիչներ են պատրաստակամ աջակցել այդ

ընտանիքներին: Ուսուցիչները մեծամասամբ տեղյակ չեն ընտանեկան բռնությանը, դրա առանձնահատկություններին և դրսևորումներին: Ուսուցիչներն ամեն ինչ անում են յուրաքանչյուր երեխայի օգնելու համար, նրան աջակցելու, ինտեգրելու համար, սակայն առանց խնդրին խորությամբ ուշադրություն դարձնելու: Ուսուցիչները կարևորում են այն, որ այդ երեխան խնդիրներ ունի, թե այդ խնդիրները ընտանեկան բռնության հետևանք են թե ոչ, հիմնականում չեն կարևորում:

Դպրոցի տնօրենների մեծ մասը թերահավատորեն է նայում ոստիկանության աշխատանքին, որի պարագայում նրանք միայնակ պետք է աշխատեն դեպքի հետ, որն էլ իր հերթին խոչընդոտում է ճիշտ աշխատանքի իրականացմանը. «Ոստիկանները լավ համբավ չունեն դրա համար էլ չենք դիմում», «Ոստիկանը չի կարող մեզ օգնել, քանի որ ոչ մեկին էլ չեն օգնել, մեկը լինի իրենց օգնի»: Դպրոցի տնօրենները միայն խիստ անհրաժեշտության դեպքում են դիմում ոստիկանություն:

Այժմ անդրադառնանք հարցվողների կողմից դպրոցում հանդիպած ընտանեկան բռնությունների կոնկրետ տեսակներին և դրանց հաղթահարման ռազմավարություններին:

Հարցվողների **62 %** նշել է, որ դպրոցում հանդիպել է ընտանեկան բռնության դեպքերի (*տե՛ս գծապատկեր 6*):

Գծապատկեր 6



Այն հարցին, թե բռնության ո՞ր տեսակն է իրականացվել երեխայի նկատմաբ, հարցվողները նշել են հետևյալ պատասխանները (*տե՛ս գծապատկեր 7)*

Գծապատկեր 7



Ինչպես տեսնում ենք պատասխաններից, հարցվողների կարծիքով գերակշռում է հոգեբանական բռնությունը, սակայն բարձր է նաև ֆիզիկական բռնության ցուցանիշը: Այդ բռնությունների հետևանքով երեխաների մոտ տեղի են ունենումմի շարք փոփոխություններ, որոնցից են ըստ հարցվողների **38,1%-ի** ագրեսիվ վարքագծի դրսևորում, **33,3 %**՝ գտնում է, որ երեխան դառնում էչշփվող, **23,8%**՝ երեխան դառնում է ճնշված: Այս ամենը, ըստ հարցվողների **97,8%**-ի բացասական ազդեցություն է ունենում երեխայի առաջադիմության վրա: Դասընկերների հետ շփման ժամանակ ևս ընտանեկան բռնության ենթարկված երեխաները տարբերվող վարք են ցուցաբերում:Հարցվողները նշում են, որ երեխաները սկսում են ագրեսիվ վարք ցուցաբերել, դառնում են հուզական, ներամփոփ, չշփվող (*տե՛ս գծապատկեր 8*):

Գծապատկեր 8



Այս պարագայում երեխաների մոտ առկա խնդիրների լուծման ճանապարհները մանկավարժների **40 %-ը**գտնում է երեխայի ծնողի հետ զրույցներ իրականացնելը, **27,3%-ը** կարևորում է երեխաների հետ առանձին զրուցելը, **14.5%-ը** մասնագետներին է ստանձնում այդ աշխատանքը, **3,6%-ը** հոգեբանի և **1,8%-ը՝** սոցիալական մանկավարժի ծառայության է դիմում: Այստեղ ևս կարող ենք արձանագրել դպրոցում հոգեբանի և սոցիալական մանկավարժի իրական դերակատարման թերությունների կամ բացակայությունների մասին:

Հետաքրքրության է արժանի այն հանգամանքը, որ հարցվողների **48.8 %**-ը նշել է, որ կարևորում է ընտանեկան բռնության դեպքում հոգեբանի աշխատանքը, **23.2 %** ուսուցչի օգնականի աշխատանքը, **15.9%** սոցիալական մանկավարժի, **9.8%** դասվարի և **2.4%** սոցիալական աշխատողի աշխատանքը:*Այս ամենի հետ մեկտեղ կոնկրետ դեպքի հետ աշխատելու պարագայում համապատասխան մասնագետների ծառայությունների մեծ մասը չի դիմում: Այստեղից կարելի է ասել, որ կա. սոցիալական աշխատողի ինստիտուտի ոչ լիարժեք կայացում Սպիտակ քաղաքում:*

Այն հարցին, թե ովքեր են համարվում աշխատանքի թիրախը, հարցվողների **41,1 %՝** նշել է երեխաները, ովքեր բռնության են ենթարկվել, **27,8 %՝**նշել է մայրը, **18,9%՝** դասընկերները, **12,2%՝**ուսուցիչը: Այստեղ հարկ է առանձնացնել մասնավորապես «մայրը» տարբերակը: ***Հարցվողների համապատասխան տոկոսի կարծիքով միայն մոր հետ աշխատանքը***

բավական է խնդիրը լուծելու համար, այն պարագայում, երբ բռնությունը դիտարկում են, որպես ընտանիքում հոր կողմից կիրառվող:

Այն հարցին, թե ի՞նչ մեթոդներ են կիրառում մասնագետները դեպքի հետ աշխատելիս, հարցվողները նշել են հետևյալ տարբերակները *(տե՛ս գծապատկեր 9).*

Գծապատկեր 9



Հարկ է նշել, որ հոգեբաններից միայն **1** հարցվող էր նշել կարիքների գնահատում և համապատասխան միջամտություն տարբերակը:

Այժմ անդրադառնանք այն հացին, թե ի՞նչ փոփոխություններ են նկատվում երեխայի մոտ՝ համապատասխան միջամտություն իրականացնելուց հետո (*տե՛ս գծապատկեր 10*):**20,7 %-ը** նշում է, որ երեխան դառնում է հանգիստ, **13.8%-ը** նշում է, որ երեխայի վարքը դառնում է առավել կառավարելի:

Գծապատկեր 10



Այն հարցին, թե ի՞նչ քայլեր եք ձեռնարկում, երբ տեղեկանում եք, որ երեխան ենթարկվում է բռնության, հարցվողները նշել են հետևյալ պատասխանները (*տե՛ս գծապատկեր 11*):

Գծապատկեր 11



Այստեղ ևս նկատում ենք շատ խնդիրներ, որոնք կապված են ընտանեկան բռնությունները կանխարգելելու համար մասնագիտական մոտեցումների կիրառման հետ:Այն հարցին, թե ի՞նչ արդյունք եք նկատել Ձեր միջամտությունից հետո, հարցվողները նշել են հետևյալ պատասխանները.

Միջամտության հետևանքները	
բարձրացել է երեխայի առաջադիմությունը	14.5%
սկսելէշփվելհամադասարանցիներիհետ	30.3%
ավելիհանգիստվարքէսկսելդրսևորել	35.5%
կարգավորվելէծնող-երեխափոխհարաբերությունները	19.7%

Հարցվողների **17,5%**-ը նշել է, որ հատուկ դասընթացների կարիք ունի, **14,3%-ը** հատուկ սենյակների անհրաժեշտության մասին է խոսել, **6.3%-ը**՝համապատասխան առարկաների, **31.7%-ը**՝ գրականության և **30.2%-ը**՝ համապատասխան տեղեկատվական բազայի:

Այսպիսով, ամփոփելովայսամենը, գալիսենքայնեզրահանգման, որընտանեկանբռնությանկանխարգելամանևհետևանքներըմեղմելուհամարանհրաժեշտեն վերապատրաստումներիրականացնելդպրոցիաշխատակազմիհետ, տեղեկատվականբազաապահովելմասնագետներիտեղեկացվածությանմակարդակըբարձրացնելուհամար, կոնկրետաշխատանքներիկարիքէզգացվումնաևհոգեբաններիևսոցիալականաշխատողներ

ի(բազմամասնագիտական

թիմի)հետ՝առավելՃիշտռազմավարություններևպրակտիկմեթոդներկիրառելուհամար:

Հետազոտության ընթացքում իրականացրելենք 7 անհատականհարցազրույցներՍպիտակիդպրոցականհաստատություններիտնօրեններիհետևմեկֆոկուսխմբայինքննարկումուսուցիչներիհետ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Ընտանեկան բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո, Հայաստանի Հանրապետության կառավարությունը իրականացնում է մի շարք քայլեր օրենքի բարելավման և կարգավորման մեխանիզմների մշակման ուղղությամբ, ինչը հավատ է ներշնչում հետագայում այս խնդրի համապարփակ լուծման համար: Նաև կարծում ենք, որ նման հետազոտություններ պետք է իրականացվեն այլ հաստատություններում ինչպես օրինակ՝ նախադպրոցական ուսումնական հաստատություններում, ՏԻՄ ներկայացուցիչների, ծնողների շրջանում ավելի պարզ ու հստակ պատկերացում կազմելու համար համայնքում առկա ընտանեկան բռնության տարածվածության մասին:

Հաշվի առնելով մեր կատարած հետազոտությունը, այն խնդիրները, որոնք ի հայտ են եկել, միանշանակ կարելի է ասել, որ ընտանեկան բռնության առկայության պարագայում **մանկավարժները պատրաստ չեն աշխատել ընտանիքի հետ**: Անհրաժեշտ է վերապատրաստման դասընթացներ իրականացնել, որը հնարավորությունկտա մանկավարժներին առավել ճկուն և ճիշտ կողմնորոշվել ընտանեկան բռնության դեպքի պարագայում: Նաև կա մեծ անհրաժեշտություն ստեղծել մեխանիզմ ուսուցիչ-ոստիկան համագործակցության ձևավորման համար, ինչը կնպաստի խնդրի արդյունավետ լուծմանը: Ընտանեկան բռնությունը մեծագույն չարիքն է մեր հասարակության մեջ , որի լուծման գործում բոլորն ունեն իրենց դերն ու նշանակությունը:

Այսպիսով առաջարկում ենք.

Իրականացնել ընտանեկան բռնության մասին վերապատրաստման դասընթացներ,դպրոցի ուսուցիչների համար:

Ստեղծել դպրոց-ոստիկանություն կապ համատեղ ընտանեկան բռնությունների դեպքերի բացահայտման և կանխագելման համար:

Կրթական հաստատության բազմամասնագիտական թիմի՝հոգեբանի, սոց. մանկավարժի, ուսուցչի օգնականի, ավելի խորը մասնագիտական վերապատրաստման իրականացում: Տուժածի հետ աշխատելու մեթոդաբանության և հմտությունների ապահովում նախնական և խորացված աջակցություն ցուցաբերելու հմտություններ:

Ավելի լայնածավալ հետազոտության իրականացում ՀՀ տարբեր կրթական հաստատություններում:

Համապատասխան գրականության և նյութերի տրամադրում կրթական հաստատություններին:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

_____ 2019թ.

Հարցաթերթ

Հարգելի հարցվող,

Մենք ներկայացնում ենք «Սպիտակի Հելսինկյան խումբ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը, որն իրականացնում է հետազոտություն՝ «Ընտանեկան բռնության ազդեցությունը երեխայի կրթության որակի վրա» ծրագրի շրջանակներում: Ձեր մասնակցությունը և անկեղծ պատասխանները շատ կարևոր են: Հարցումն անանուն է և տվյալները ներկայացվելու են ընդհանրացված տեսքով:

I Անձնական տվյալներ

1. Հարցման վայրի հասցեն_____

Սեռ

1.իգական

2.արական

2.Տարիքը.

1.20-35

2. 36-50

3.51 և ավելի

3.Բնակության վայրը (մարզ, շրջան, գյուղ, քաղաք)_____

4.Ընտանեկան կարգավիճակը.

1.ամուսնացած ապրում եմ համատեղ

2.ամուսնացած, ժամանակավոր ապրում եմ առանձին

3.ապրում եմ համատեղ առանց ամուսնության գրանցման

4.չամուսնացած

5.բաժանված եմ, ապրում եմ առանձին

6.այրի

5.Ունե՞ք հաշմանդամություն

1.Այո

2.Ոչ

6.Ձերմասնագիտությունը

_____

II Հիմնախնդրինվերաբերվողհարցեր

7.Տեղյա՞կեք, որգոյությունունենընտանեկանբռնությանդեպքեր:

1.այո

2.ոչ

8. Տեղյա՞կեքընտանեկանբռնությանտեսակներիմասին:

1.Այո

2.Ոչ(անցումհարց 10)

9. Ընտձեզորո՞նքենընտանեկանբռնությանտեսակները

1.սեռական

2.մշակութային

3.հոգեբանական

4.ուղղակի

5.տնտեսական

6.ֆիզիկական

7.հասարակական

10. Տեղյա՞կեքընտանեկանբռնությանիրավականկարգավորումներիմասին:

1.այո

2.ոչ(անցումհարց 12)

11.Զե՞րկարծիքովընտանեկանբռնությանի՞նչիրավականկարգավորումներգոյությունունեն:

_____
_____
_____
_____
_____

12.Դպրոցումհանդիպումեքարդյո՞ք ընտանեկանբռնությանպատճառով երեխաներիմոտվարքայինդրսևորումներ:

1. այո
2. ոչ (անցումհարց 14)
3..չեմնկատելնմանդեպք (անցումհարց 14)

13. Եթե այո, ապա բռնությանո՞րտեսակիհետևանքկարողդալինել:

1.ֆիզիկական
2. հոգեբանական
3. սեռական
4. տնտեսական

14.«Ձերկարծիքովինչպեսենընտանեկանբռնություններըդրսևորվումերեխայիվարքիվրա:

1.Երեխանշատընկճվածէ, չիշփվումընկերներիհետ

2.Երեխանագրեսիվէ, միշտպաշտպանականռեակցիաէցուցաբերում

3. Երեխանճնշվածէ, չիուզումտունգնալ

4.Երեխանակտիվէ, ոչմիկերպչինկատվում, որընտանեկանբռնությունապրողընտանիքումէապրում

5.այլ_____

15.Ձեր կարիծիքով
ինչպե՞սէազդումընտանեկանբռնությունապրողերեխայիառաջադիմությանվրա:

1.չիազդում

2.վատէազդում

3.շատվատէազդում

16.
Ընտանեկանբռնությունապրողերեխանինչպիսի՞վարքէդրսևորումընկերներիհետշփվելիս:

1.չիշփվում

2.անընդհատկռվումէընկերներիհետ

3.շատշուտնեղանումէ, հուզվումէ

4.այլ _____

17.Ի՞նչքայլերենձեռնարկվումձերևդպրոցիկողմից՝նմանխնդիրներըլուծելուուղղությամբ:

_____
_____
_____
_____

18. Ունե՞քդպրոցումհոգեբան:

ա. այո

բ. ոչ (անցումհարց 19)

19.Արդյո՞քդպրոցիհոգեբաննաշխատումէերեխայիհետ:

1.այո

2.ոչ (անցումհարց 21)

3.այլ _____

20. Ձերկարծիքովի՞նչաշխատանքէտարվումհոգեբանիկողմից

1. անհատականզրույցներէիրականացնումծնողներիհետ

2. անհատականզրույցներէիրականացնումերեխայիհետ

3. զրուցումէհամադասարանցիներիհետ

4. զրուցումէուսուցիչներիհետ

5. ոչինչչիիրականացնում

6. այլ

21.Տեղյա՞կեքորտեղէաշխատումհոգեբանը:

22. Ի՞նչփոփոխություններեքնկատումերեխայիմոտ՝հոգեբանիաշխատանքիցհետո:

_____

_____

_____

23. Երբտեղեկացելեք, որերեխանենթարկվումէբռնությանինչքայլեքձեռնարկել:

նշելբոլորհնարավորտարբերակները:

1. ոչինչչեմարել

2. խոսելեմերեխայիհետ

3. Խոսելեմծնողիհետ

4. խոսելեմտնօրենիհետ

5. խոսելեմդասղեկիհետ

6. խոսելեմոստիկանիհետ

7.այլ_____

24. Ի՞նչարդյունքեքնկատելՁերմիջամտությունիցհետո:

1. բարձրացելէերեխայիառաջադիմությունը

2. սկսելէշփվելհամադասարանցիներիհետ

3. ավելիհանգիստվարքէսկսելդրսևորել

4. կարգավորվելէծնող-երեխափոխհարաբերությունը

5.ոչմիարդյունքիչենքհասել

6.այլ_____

III Հետադարձ կապ

25. Կցանկանայիքավելինիմանայիքընտանեկանբռնությանմասին:

1.Այո

2.Ոչ

26. Կմասնակցեք «Սպիտակի Հելսինկյան խումբ» իրավապաշտպան ՀԿ-ի կողմից կազմակերպողդասընթացին:

1. Այո

2. Ոչ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ